ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ուսումնական ծրագիր
նախնական մասնագիտական կրթության «ՈՍՏԻԿԱՆ» որակավորման
«Անգլերեն լեզու» դասընթացի

Քննարկվել և հավանության է արժանացել
ՀՀ ոստիկանության կրթահամլիրի
ուսումնական կենտրոնի «Ընդհանուր
պատրաստականություն» կրթաճյուղի
01.06.2018թ-ի թիվ 4 նիստում

ք. Երևան
2018թ.

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Նախնական մասնագիտական կրթության «Անգլերեն»

N	*Թեմաների անվանումը*	*Ժամա-քանակն ըստ թե-մաների*	*Ժամաքանակն ըստ պարապմունքների ձևի*		
			Դասա-խոսու-թյուն	*Գործ-նական*	*Սեմինար*
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1.	Այբուբեն (Alphabet), տառակապակցություններ, անձնական դերանուններ, to be (լինել) բայի ներկա ձևը, Lesson 1 (դաս 1):	2	2	-	-
2.	Գոյական անուն, գոյականի թիվ, ստացական դերանուններ, ցուցական դերաննուներ, տառակապակցություններ, ողջույնի խոսքեր:	2	-	2	-
3.	Թվականներ, նախդիրներ, հոդեր (Articles), շաբաթվա օրեր, ամիսներ, եղանակներ, Lesson 2 (դաս 2):	2	-	2	-
4.	Բայ, ներկա անորոշ ժամանակաձև (The Present Indefinite Tense), ժամեր (Time), արտասանության կանոններ, to have (ունենալ) բայի ներկա ձևը, մարմնի մասերը, Lesson 3 (դաս 3):	2	-	2	-
5.	Ներկա անորոշի հարցական և ժխտական ձևերը, գոյականի հոլով (Case), to be (լինել) բայի բայի հարցական և ժխտական ձևերը, ընտանիքի անդամները:	2	-	2	-
6.	Անցյալ անորոշ ժամանակաձև (The Past Indefinite Tense), ածական անուն, to be և to have բայերի անցյալ ձևը, there is/there are.	2	-	2	-
7.	Ապառնի անորոշ ժամանակաձև (The Future Indefinite Tense), հարցական դերանուններ և մակբայներ, նկարագրել մարդկանց, Lesson 4 (դաս 4):	2	-	2	-
8.	Ոստիկանության կոչումներ, քաղաքային վայրեր և ուղղություններ, ընդհանուր կրկնություն (revision); Lesson 5 (դաս 5):	2	-	2	-
9.	Ամփոփիչ թեստ (Final Test):	2	-	2	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	**18**	**2**	**16**	**-**

առարկայի եռամսյա դասընթացի

Կազմեց՝
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի «Ընդհանուր պատրաստականություն» կրթաճյուղի դասախոս, ոստ. մայոր

Հ.Ս.Քեշիշյան

Քննարկվել և հաստատվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի «Ընդհանուր պատրաստականություն» կրթաճյուղի նիստում, արձանագրություն թիվ 4, 01.06.2018թ.
կրթաճյուղի պետ, ոստ. փոխգնդապետ

Ա.Ա.Ալեքսանյան

1.Դասընթացի ընդհանուր ծավալն՝ ըստ պարապմունքի տեսակների

Ուսումնական պլանին համապատասխան առարկայի ուսումնասիրման համար հատկացված է 18 ժամ, որից՝

- դասախոսություն - 2 ժամ,
- գործնական - 16 ժամ,

2.«Անգլերեն լեզու» առարկայի ուսուցման նպատակը և խնդիրները.

Հետևյալ կուրսի հիմնական նպատակներն են.

- հաշվի առնելով մասնագիտական առանձնահատկությունները՝ նպաստել լեզվական կարողությունների զարգացմանը,
- ստեղծել հիմնական բառերի ու բառակապակցությունների կուրս տարբեր իրավիճակներում քաղաքացիների հետ շփվելու համար,
- սովորեցնել թարգմանել մամուլի հոդվածներ և մասնագիտությանը վերաբերվող այլ ինֆորմացիայի աղբյուրներից վերցված նյութեր, փաստաթղթեր:

3.Դասընթացի բովանդակության յուրացման մակարդակին ներկայացվող պահանջները.

Դասընթացի ավարտից հետո սովորողը պետք է կարողանա՝

- ներկայանալ, ծանոթանալ ուրիշ մարդկանց հետ,
- նկարագրել մարդու արտաքինը, սովորությունները, զգացմունքները,
- ասել ժամը քանիսն է, շփվել քաղաքացիների հետ տարբեր իրավիճակներում,
- ճանապարհ ցույց տալ օտարերկրյա քաղաքացիներին,
- լսելով հասկանալ անգլերեն խոսք, գրել, կարդալ գոնե տարրական մակարդակով:

4.Առարկայի ուսուցման մեթոդական ցուցումներ.

Ուսումնական պրոցեսն իր մեջ ներառում է դասախուսություն, գործնական պարապմունքներ, բազմազան մեթոդների կիրառում:

Թեմա 1 - Այբուբեն (յուրաքանչյուր տառով սկսվող բառ սովորել)

1. տառակապակցություններ (sh, ch, ph) (իմանալ, թե որ բառերում և որ դեպքերում են օգտագործվում տվյալ տառակապակցությունները)
1. անձնական դերանուններ (I,you,he,she,it,we,you,they)
2. to be (լինել) բայի ներկա ձևը (I am, you are, he is, she is, it is, we are, you are, they are)

Թեմա 2.

1. Գոյական անուն, գոյականի թիվ (շեշտը դնել գոյականի հոգնակի թվի վրա, ծանոթացնել բացառություններին)
2. Ստացական և ցուցական դերանուններ
3. Տառակապակցություններ */kh, gh, zh, ts, …/* (իմանալ, թե որ բառերում և որ դեպքերում են օգտագործվում տվյալ տառակապակցությունները)
4. *Greetings and farewells* /Ողջույնի խոսքեր/
   (Ինչպես ողջունել միմյանց ընկերական շրջապատում կամ պաշտոնական հանդիպումների ժամանակ, ինչպես հաջողություն մաղթել միմյանց)

Թեմա 3.

1. Թվականներ (իմանալ 1-ից մինչև միլիարդ թվերը, նաև դասական թվականները)
2. Նախդիրներ (տեղ, ժամանակ, ուղղություն և այլ հարաբերություններ ցույց տվող նախդիրներ)
3. Հոդեր (անորոշ և որոշյալ)
4. Շաբաթվա օրեր, ամիսներ, տարվա եղանակներ

Թեմա 4.

1. Բայ: Անորոշ ներկա ժամանակաձև: (Իմանալ, թե անգլերենում բայը քանի ժամանակ և ժամանակաձև ունի)
2. Ժամեր
3. Արտասանության կանոններ (ծանոթանալ բազմաթիվ կանոններից մի քանիսի հետ՝ անգլերեն ընթեցանությունը հեշտացնելու համար)
4. *to have* բայի ներկա ձևը
5. Մարմնի մասեր

Թեմա 5.

1. Ներկա անորոշի հարցական և ժխտական ձևերը
2. Գոյականի հոլով (շեշտը դնել ստացական հոլովի վրա)
3. *to be* բայի հարցական և ժխտական ձևերը
4. Ընտանիքի անդամներ (պատմել յուրաքանչյուրի ընտանիքների անդամների, նրանց զբաղմունքների մասին)

Թեմա 6

1. Անցյալ անորոշ ժամանակաձև
2. Ածական անուն (ծանոթանալ ածականների տեսակների և աստիճանների հետ)
3. *to be և to have* բայերի անցյալ ձևը
4. *there is, there are*

Թեմա 7

1. Ապառնի անորոշ ժամանակաձև
2. Հարցական դերանուններ և մակբայներ
3. *to have* բայի հարցական և ժխտական ձևերը
4. Նկարագրել մարդկանց (տալ մարդկանց արտաքին նկարագրությունը, ըստ նկարագրության օգնել գտնելու փնտրվող անձին)

Թեմա 8.

1. Ոստիկանության կոչումներ (ՀՀ ոստիկանության կոչումներին համապատասխան անգլերեն տարբերակները)
2. Քաղաքային վայրեր և ուղղություններ (ինչպես գտնել, ինչպես հասնել…)
3. Ընդհանուր կրկնություն

Թեմա 9. Ամփոփիչ թեստ (գրավոր թեստ անցած թեմաների վերաբերյալ)

Օգտագործված գրականության ցանկ

1. Վարդանյան Ս.Վ., Հայերեն – անգլերեն ոստիկանական համառոտ բառարան, Երևան 2001
2. Hayrapetyan A.A. - English for the Police Academy, Yerevan 2007
3. Թոքմաջյան - Ժամանակակից քերականություն, Երևան, 1995
4. Raymond Murphy - Essential Grammar in use, Cambridge, 2011